Ա Զ Դ

Առ Հոգեւոր Ուխտն Հայաստանեայց Եկեղեցւոյ որ ի Ռուսիայ։

Ըստ խնդրանաց Առաջնորդական Տեղապահին Վան քաղաքի, այսու յանձնարարի թեմական Ատենից, Բարձրապատիւ Փոխանորդաց և ստորադրելոց նոցին գործակալաց և քահանայից՝ որոնել ի վիճակս իւրեանց զՏ. Կիրակոս քահանայն Սպարկերացի (ի նահանգէն Վանայ) հանդերձ միով որդւովն, որ ի հինգ ամաց հետէ գաղթելով ի սահմանս Ռուսիոյ ՀՊՀ յանյայտութեան, անխնամ թողեալ զընտանիսն իւր։

Ընդ ի յայտ գալ քահանային խնդրի առաքել զնա ի Մայր Աթոռս, յաղագս վերադարձուցանելոյ զնա ի հայրենիս իւր։

Դիւան Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց.

— ⁂ —

ԽՆԴԻՐ.

Յանուն մարդասիրութեան խնդրուում է Արժան. Քահանաներից և ուրիշ ձեռնհաս անձերից տեղեկութիւն յայտնել Արարատի խմբագրութեան Կարնեցի 24 տարեկան գաղթական ԳՐԻԳՈՐ ՏԷՐ Յովհաննիսեանցի մասին, եթէ նորա բնակութեան տեղի նկատմամբ որ և է բան գիտեն։ Յիշեալ երիտասարդի աղգականները վաղուց է որոնում են, բայց չեն գտնում։ Մէկ և կէս տարի առաջ եղել է նա Բաքու քաղաքում։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՀՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Շնորհակալութեամբ ստացանք Մայր Աթոռի Մատենադարանի համար հետեւեալ նուէրները.

Արժանապատիւ Տ. Մելքիսեդէկ քահանայ Մելիքեանից, Հիւսէինի գիւղից,

1. *Մի ձեռագիր նոտրագիր բառարան անթուական, Հ. Եղիա վարդապետ Հասան-Ջալալեանի ձեռքով.*

2. *Գ. Նիկողայոս Մառից իւր մագիստրոսական շարադրութիւնը՝* Сборники Притчъ Вардана I. II. *և* III. *հատորները։*

Մատենադարանապետ՝

Գ. Վ. Յովսէփեան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳ. ՀԱՆԴԻՍԻՑ.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ
(*Մայիս ամիս*)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

Խիկար և իւր իմաստութիւնն. 129։—Գեղացիք զԵղիսաբեթուպոլսեցիս կամբաստանեն թէ իրենց երկիրներն ձեռքերնէն առած են. 133։—Պարսկաստանի հայերը, Նրանց անցեալը, Ներկան և ապագան. 141։—Եւդոկիոյ Հայոց գաւառաբարբառը. 145։—Նախահայերէնի հետքեր զօկերէնում. 147։—Նախակիլիկեան-հաթեան նշանագրով նոր կնիք մ'ալ. (պատկերով) 149։

ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ

Նոր հրատարակութիւնք. 150։ — Ազգային թերթերէ ծաղկեփունջ. 157։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, 159։